# Հարկային հաշիվ

(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 5 | Դեկտեմբեր | 2018 թ. | Ա | 9020094748 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|---|---|---|
| 5 | Դեկտեմբեր | 2018 թ. | | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար | [7] | |
|---|---|---|---|---|
| | | | [8] | |
| | | | [9] | |

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 9 4 0 7 9 8 8 |
| [12] Անվանումը | ՆՅԱՐԴԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՄԱՐԶ. ԴԻՍՊ. Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 9 4 0 7 9 8 8 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ՎՏԲ Հայաստան բանկ Կապան մ/ճ N 16022457801500 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ՍՅՈՒՆԻՔ ԿԱՊԱՆ ԿԱՊԱՆ Բաղաբերդի 48 |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [18] Անվանումը | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [19] Բանկային տվյալները | ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումարը | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Թիվ 90502718 քր. գործով դատահոգեբուժական փորձաքննություն | դեպք | 1 | 32833 | 32833 | 20 | 6566.6 | 39399.6 |
| Ընդամենը | | | | | 32833 | X | 6566.6 | 39399.6 |

Դուրս գրող՝ ALAVERDYAN ANAHIT 6711590040
անունը, ազգանունը

Ստացող
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)
պաշտոնը ստորագրությունը (անունը, ազգանունը)

05/12/2018 15:33:35

# ՈՐՈՇՈՒՄ
# ԴԱՏԱՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք.Երևան

08.10.2018թ.

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ, 1-ին դասի խորհրդական Կ.Ղազարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 90502718 քրեական գործի նյութերն ըստ մեղադրանքի Ռոբերտ Սամվելի Շադյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի առաջին մասով,

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ՊՆ 60369 զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող նորակոչիկ, շարքային Ռոբերտ Սամվելի Շադյանը, 2018թ. օգոստոսի 18-ին՝ ժամը 21:05-ի սահմաններում, զորամասի 1-ին հրաձգային գումարտակի հրամանատարի աշխատասենյակում՝ գրասեղանին դրված գրասենյակային դանակով /ռեզակ/ ձախ նախաբազկի առաջային մակերեսի ստորին երրորդականի շրջանում երկու կտրվածքների անելու եղանակով կատարել է ինքնավնասում և տեղափոխվել ՀՀ ՊՆ 70011 զորամաս /ԶԿԶ հոսպիտալ/, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Դեպքի առթիվ 14.09.2018թ. Գորիսի կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90502718 քրեական գործը և այն նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ ԶՔԳՎ 9-րդ կայազորային քննչական բաժին:

08.10.2018թ. Ռոբերտ Սամվելի Շադյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի առաջին մասով և նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել հրամանատարության հսկողության հանձնելը:

Նկատի ունենալով, որ քրեական գործի վերջնական ընթացքը լուծելու և կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատահոգեբուժական բնագավառի մասնագիտական հատուկ գիտելիքներ ու մի շարք այլ հարցեր, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55, 243-245 և 248 հոդվածներով,

Ո ր ո շ ե ց ի՝

1. Վարույթումս քննվող թիվ 90502718 քրեական գործով նշանակել դատահոգեբուժական ամբուլատոր փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր ՓԲԸ-ի փորձագետներին:

2. Դատահոգեբուժական փորձագետների հանձնաժողովի լուծմանն առաջադրել հետևյալ հարցերը.

ա) Մեղադրյալ Ռ.Ս.Շաղյանը որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հոգեկան հիվանդությամբ և երբվանից:

բ) Եթե Ռ.Ս.Շաղյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը գտնվում է արդյոք պատճառական կապի մեջ նրա կողմից 2018թ. օգոստոսի 18-ին անդամախեղում կատարելու հետ:

գ) Եթե Ռ.Ս.Շաղյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ /քրոնիկ հոգեկան հիվանդությամբ, հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարմամբ, տկարամտությամբ կամ հոգեկան այլ հիվանդագին վիճակով/, ապա տվյալ հիվանդությունը կամ հիվանդագին վիճակը կամ խանգարումը 2018թ. օգոստոսի 18-ին անդամախեղում կատարելու պահին նրան զրկել է իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու կամ դրանք ղեկավարելու ընդունակությունից /հնարավորությունից/:

դ) Ռ.Ս.Շաղյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

ե) Ռ.Ս.Շաղյանը իր առողջական վիճակով հասարակության համար վտանգավորություն ներկայացնում է, թե՝ ոչ:

զ) Եթե Ռ.Ս.Շաղյանն անմեղսունակ է, ապա նա բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների կարիք ունի, թե՝ ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

է) Եթե Ռ.Ս.Շաղյանի մոտ առկա է հոգեկան հիվանդություն, ապա հնարավոր է, որ այն փոխանցված լինի ժառանգաբար, թե ոչ:

3. Փորձագետներին խնդրել պատասխանելու նաև այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կարող են առաջանալ փորձաքննության ընթացքում, կմտնեն դատահոգեբուժական փորձագետների իրավասությունների մեջ և էական նշանակություն կարող են ունենալ քրեական գործի նախաքննության լրիվության, բազմակողմանիության և օբյեկտիվության համար:

4. Փորձագետներին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338 հոդվածով ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ՝ Կ.Ղազարյան